

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/82-1>>**

ք.Երևան

«20» հունիսի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Մխիթարյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ. 8 մանկապարտեզի վերանորոգման և բակերի բարեկարգման** աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ օգոստոսի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուին խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուին պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուին չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուին ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **26739600 (քսանվեց միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 4456600 (չորս միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան



Կապալառու

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ
Ք. Սևան, Գրիբայդովի 12/25
«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ, Դավթաշեն մ/6
Հ/Հ 1930066348700100
ՀՎՀՀ 08616945

Վ. Մխիթարյան



Հավելված թիվ 1
<< 20>> հունիսի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/82-1>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

**«Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ. 8 մանկապարտեզի
վերանորոգման և բակերի բարեկարգման » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

NN	Քիմնակրումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծախս	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը հազ. ՀՀ դրամ
		<u>Քանոցան աշխատանքներ</u>				
1	E9-121 K=0.7	Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում /հանձնում պատվիրատուին/, 53.7զմ	տ	1.8000	18.6870	33.6366
2	E27-36	Բետոնե եզրաքարերի քանդում /հիմքով/	զմ	75.0000	0.6620	49.6500
3	E27-36	Բազալտե եզրաքարերի քանդում /հիմքով/	զմ	67.5000	0.6620	44.6850
4	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով /մասնակի/, h=20սմ, 190.0քմ	մ³	38.0000	2.8960	110.0480
5	E46-109	Բազալտե սալերի քանդում 20մմ հաստությամբ	մ²	58.0000	0.3260	18.9080
6	E7-738 K=0.8	Մետաղական բազրիքների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	զմ	18.3000	0.3110	5.6913
7	E46-99	Բետոնե հարթակների քանդում	մ³	6.5000	11.9840	77.8960
8	E10-28 K=0.8	Առկա նստարաններից փայտե չորսուների քանդում 50x50մմ, 160.5զմ	մ³	0.4010	17.7230	7.1069
9	E9-209 K=0.7	Առկա նստարաններից մետաղական թիթեղի ապամոնտաժում 32մ2	տ	0.7540	65.6520	49.5016
10	E48-253 կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	50.0000	0.0450	2.2500
11	C310-1 տ.մ.կ 29	Առկա զրուցարանի ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	3.0000	4.6770	14.0310

12	C310-2 տ.մ.կ 29	Առկա նստարանների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	3.0000	1.1500	3.4500
13	C310-1 տ.մ.կ 29	Առկա խաղասարքերի ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին	հատ	4.0000	4.6770	18.7080
14	E46-79 կիր.	Քարե հենապատի քանդում	մ³	4.2000	9.0620	38.0604
15	E1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	86.0000	1.6550	142.3300
16	E1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով, կողկիցքով	մ³	7.0000	1.6550	11.5850
17	E1-969 E1-1184	Բնահողի ետլիցք ձեռքով կողկիցքից տոփանելով	մ³	7.0000	1.0130	7.0910
18	E1-1587	Շին. աղբի և ավելորդ բնահողի մեխանիզմով բարձրում ինքնաթափ մեքենաների վրա	մ³	82.4000	0.3450	28.4280
19	C310-13	Շին. աղբի և ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 13կմ	տ	152.7000	1.8800	287.0760
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				0.0000
		<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</u>				0.0000
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ³	3.2130	6.1150	19.6475
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	183.6000	4.1780	767.0808
		<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u>				0.0000
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ³	1.1930	6.1150	7.2952
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	159.0000	2.0850	331.5150
		<u>Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u>				0.0000
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ³	5.3350	6.1060	32.5755
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստությամբ զ/ա շաղախով	մ³	4.2680	11.7660	50.2173
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	մ²	106.7000	3.7480	399.9116
		<u>Հենապատերի վերանորոգում</u>				0.0000

1	E6-90 կիր.	Հեմապատի ուղղում B15 դասի բետոնով	մ ³	1.2100	33.8180	40.9198
2	E15-300	Հեմապատերի դեկորատիվ բարձրորակ սվաղում	մ ²	321.5000	2.6950	866.4425
		<u>Աստիճանների և հարթակների վերանորոգում, երեսպատում բազալտե սալերով</u>				0.0000
1	E6-13 կիր.	Բետոնե աստիճանների վնասված հատվածների վերանորոգում B15 դասի բետոնով բերելով նախագծային չափերի	մ ³	1.1000	27.9220	30.7142
2	E11-221-1	Հարթակների երեսպատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ ²	12.0000	10.1900	122.2800
3	E15-77	Աստիճանների, հարթակների երեսպատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ ²	13.0000	12.4940	162.4220
4	E15-77	Աստիճանների դիմային հատվածների երեսպատում բազալտե սալիկներով 20մմ հաստ.	մ ²	23.8000	11.1750	265.9650
5	շուկա	Աստիճանների մետաղական բազրիքների տեղադրում /պատին ամրացվող 2 ձողով/	զմ	10.0000	2.7720	27.7200
		<u>Ա/բետոնե ծածկույթի իրականացում մայրերում, 3սմ հաստ.</u>				0.0000
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ /մասնակի/	մ ³	4.4000	6.1060	26.8664
2	E27-169	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	մ ²	720.0000	1.7500	1260.0000
		<u>Ճակատների բարեկարգման աշխատանքներ</u>				0.0000
1	P13-33	Շենքի արտաքին պատերի, լվացում ջրի շիթով, հատուկ լուծույթների օգտագործմամբ	մ ²	302.0000	0.5470	165.1940
2	СНП IV-3-82 հաշվարկ	Ավտոմեքարծիճի շահագործում	մեք. ժամ	22.0000	5.2720	115.9840
		<u>Ցայտադրյալի պատրաստման, տեղադրման աշխատանքներ</u>				0.0000
1	E6-20	Ցայտադրյալի տեղի բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	0.0300	32.0690	0.9621
2	E17-91 շուկա	Ցայտադրյալի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտե քարից	հատ	1.0000	83.8830	83.8830
3	շուկա	Ամրան Ф14A500с	տ	0.0014	197.9350	0.2692
4	շուկա	Պող. քիթեղ 200x200x2մմ	մ ²	0.0400	5.4220	0.2169
5	շուկա	Ցինկապատ թասակ Ф200մմ, h=100մմ	հատ	1.0000	6.8850	6.8850

6	շուկա	Ցայտիչի տեղադրում $\Phi 15$ մմ	հատ	1.0000	4.7330	4.7330
7	E23-1	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում	մ ³	8.9300	3.0120	26.8972
8	E22-448	Հավաքովի ե/բ դիտահորի կառուցում	մ ³	0.1700	42.8720	7.2882
9	E11-11	Բետոնե նախապատրաստական շերտ	մ ³	0.1200	23.8380	2.8606
10	E11-5	Թեթև խիճ	մ ³	1.3000	6.0070	7.8091
11	P9-118	Մետաղական դռնակ	տ	0.0150	400.9080	6.0136
12	շուկա	Ռետին	գմ	3.0000	0.3440	1.0320
13	շուկա	Ծխնի	հատ	2.0000	0.3440	0.6880
14	շուկա	Փական	հատ	1.0000	1.2910	1.2910
15	շուկա	Ջերմամեկուսիչ սալ (երկտավր 30x3 L=400մմ-2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարիսխ-4հատ, փոփրապլաստ h=100մմ -1հատ, հեղյուս L=140մմ, Φ 8-6հատ)	կոմպ	1.0000	13.7690	13.7690
16	E22-117	Ջերմամեկուսիչ նյութ	գմ	1.5000	0.3010	0.4515
17	շուկա	Շին. սիլիկոն	հատ	1.0000	0.8430	0.8430
18	E15-613	Մետաղական դռնակի յուղաներկում	մ ²	3.0000	0.4420	1.3260
19	E22-117	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու)	գմ	29.0000	0.9780	28.3620
20	E22-117	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի)	գմ	37.5000	0.3350	12.5625
21	E22-117	Պլաստմասե պատյան խողովակ DN32	գմ	8.0000	0.3870	3.0960
22	E16-134	Մետաղե գնդային փական DN15	հատ	1.0000	2.9470	2.9470
23	E22-312	Պոլիէթիլեն (PE) de15 խողովակների վաճուճ, ախտահանում	կմ	0.0375	41.8830	1.5706
						0.0000
		Այլ աշխատանքներ				0.0000

1	շուկա	Անվտանգության ծայնային կանչի համակարգի ձեռք բերում, մոնիթինգ	կ-տ	1.0000	81.4460	81.4460
2	E15-201	Դրոշակի պատվանդանի սվաղում ց/ավազե շաղախով	մ ²	7.0000	1.2210	8.5470
3	E15-521	Սվաղած մակերեսի ներկում ճակատային ներկով	մ ²	7.0000	0.4370	3.0590
4	E10-28	Նստարանների փայտե չորսուների լրացում 50x50մմ չափերով, 294.0զմ	մ ³	0.7350	157.6180	115.8492
5	E15-608	Փայտե մասերի երկտակ լաքապատում	մ ²	58.8000	0.4520	26.5776
6	E15-521 K=2	Հենապատի նկարազարդում	մ ²	159.2000	0.8450	134.5240
7	E15-77	Շենքի մուտքի հատվածի հատակի երեսպատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ ²	61.0000	11.9070	726.3270
8	E15-201	Նկուղ իջնող աստիճանների կողապատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ ²	15.0000	1.2210	18.3150
9	E27-22-1	Խճի մախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	0.1700	6.1060	1.0380
10	E6-2	Հիմքի իրականացում B15 դասի բետոնով	մ ³	0.8400	37.2350	31.2774
11	շուկա	Մետաղական ցանկապատի /H=1.80մ/ ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում, ներկմամբ	զմ	69.8000	31.3430	2187.7414
12	Գնահաշվարկ N8	Մետաղական դարպասի /3.0x1.8մ/ ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում, ներկմամբ	հատ	1.0000	60.9970	60.9970
13	Գնահաշվարկ N9	Մետաղական դռնակի /1.0x1.8մ/ ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում, ներկմամբ	հատ	1.0000	30.6620	30.6620
14	E15-614	Մետաղական ցանկապատի, դարպասների, դռնակների երկչերտ յուղաներկում	մ ²	265.6800	0.7910	210.1529
15	Գնահաշվարկ N2	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	10.0000	16.3060	163.0600
16	Գնահաշվարկ N3	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	7.0000	8.6500	60.5500
17	Գնահաշվարկ N7	Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	4.0000	348.7610	1395.0440
18	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	169.8320	339.6640
19	Գնահաշվարկ N4	Նոր մանկական խաղասարք «ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	76.9290	153.8580
20	Գնահաշվարկ N6	Նոր մանկական խաղասարք «Գորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	41.2800	82.5600

21	Գնահաշվարկ N6	Ավազուտի ծածկոցի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	269.3470	269.3470
